Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7030

3К172
Z-22

1931

23 SEP 2006

1 DEC 2009

ՀԱՄ Կ (Բ) Կ ԿԿ
ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ (1931 Թ.) ՊԼԵՆՈՒՄԻ
ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

3 Kп2
Հ-22

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

1 4 MAR 2014

7030

Գեոհրատի Տպարան
Հրատարակ. 1912
Գլ-վիտ 6973 (բ)
Պատվ. 5817
Տիրաժ 6000

ՏԿՊ2
Ա-22
Ստ.

ՀԱՄ Կ(Բ)Պ ԿԿ-ի ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ ԻՍԱՆԱԶԵՎԵՐԸ

ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ

(ՀԱՄԿ(Բ) Կ ԿԿ-Ի ՊԼԵՆՈՒՄԻ 1931 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ՎՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԿ. ԱՆԴՐԵՅԵՎԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՅՑՄԱՆ ԱՌԹԻՎ)

1. Կենտկոմի պլենումը լսելով Հաղորդակցության ճանապարհների ժողկոմատի զեկուցումը, ճիշտ է գտնում Քաղբյուրոյի սույն թվի հոկտեմբերի 5-ի յեզրակացություններն ու գնահատականը յերկաթուղային տրանսպորտի աշխատանքների վերաբերյալ և մասնավորապես ամբողջությամբ հավանություն է տալիս ՀՃ ժողկոմատի ղեկավարության փոփոխման վորոշումին։

1808
35349

2. Պլենումը հաստատում է, վոր յերկաթուղային տրանսպորտի աշխատանքների հիմնական պակասությունները չարունակում են մնալ դեռևս լիկվիդացիայի չենթարկված—դիմադրությունն ու անպատասխանատվությունը յերկաթուղային մարմինների աշխատանքներում, սկսած ստորին ողակներից և վերջացրած ՀՃ ժողկոմատով, բայլշևիկյան պայքարի բացակայությունը չոգեմեքենաների զուգերթի տապալման դեմ, տրանսպորտի ներքին ռեզերվների ոգտագործման և նյութական միջոցների խիստ խնայողական ծախսման հասնելու անկարողությունը։

Մինչև այժմ ել յերկաթուղային տրանսպորտում աշխատավարձի հարցերում նշանակալից չափով դեռ գոյություն ունի հավասարեցումը, իսկ անամարմինները և պրոֆմիությունները դեռ չեն ձեռնարկել ախատանքի կազմակերպումը, վարձատրությունը և մատակարարման բարելավումը վճռականորեն կարգավորելու գործին։ Շոգեմեքենաների և վագոնների վերանորոգման վորակը, ինչպես ՎՈՐԶ-ի գործարաններում, նույնպես և դեպոներում, դեռևս շատ անբավարար է։ Յերկաթուղային աշխատանքներում մեծագույն պակասություն հանդիսանում է նույնպես չահագործման (էքսպլոատացիայի) վատ դրվածքը (փոխադրումների պլա-

նավորումը, կայարանների, դիսպետչերների և ուրիշների աշխատանքը)։

Տրանսպորտում կուսակցության վորոշումների կիրառման հիշյալ բոլոր թերությունների հիմնական պատճառը նշանակալից չափով հանդիսանում է տրանսպորտի ապարատի անշարժությունը, բյուրոկրատիզմը և յերկաթուղային ղեկավար կոմունիստների կողմից այդ անշարժության ու բյուրոկրատիզմի դեմ պայքարելու, աշխատանքը նոր ձևով դնելու, ինչպես նաև յերկաթուղային ամբողջ աշխատանքում վճռական բեկումն ստեղծելու համար բայլշեվիկյան տեմպով աշխատելու անկարողությունը։

Այս թերությունների պատճառով յերկաթուղային տրանսպորտը, չնայած իր աշխատանքների վորոշ բարելավման անցյալ տարվա համեմատությամբ, դեռևս մնում է ժողովրդատնտեսական պլանի հաջող կատարման նեղ տեղը, լուրջ արգելակներից մեկը։

3. Դրա հետ միասին Կենտկոմը նշում է, վոր մի շարք գործարաններ և առանձին արդյունաբերական միավորումներ անբավարար կերպով են կատարում տրանսպորտի պատվերները, հատկապես չոգեմեքենաների, վագոնների և պահեստի մասերի պատրաստման գործում։

4. Յերկաթուղային տրանսպորտի անխափան աշխատանքն աշնան և ձմեռվա փոխադրությունների ամբողջ ընթացքում ապահովելու համար Համկ(բ)կ Կենտկոմը լիովին հավանություն է տալիս ՀՃԺ կոմիսարիատի նոր ղեկավարության միջոցառումներին, վորոնք նպատակ ունեն առողջացնել չոգեմեքենաների ու վագոնների պարկը, վճռականորեն բարելավել ընթացիկ և կապիտալ ռեմոնտի վորակը, լիովին կարգի բերել դեպոները, լրիվ լիկվիդացիայի յենթարկել զուգերթի տապալումը, վերացնել վագոնների դիմաղրկությունը, բարելավել գնացքների յերթևեկությունը, ուժեղացնել գծի տարողական ունակությունը, բարելավել ջրամատակարարումն ապրանքատեղափոխության բոլոր գլխավոր ուղղություններով, լիկվիդացիայի յենթարկել աշխատավարձի հավասարեցումը յերկաթուղային տնտեսության բոլոր ճյուղերում, պրոդրեսիվ գործավարձային սիստեմ կիրառել, վճռականորեն բարելավել գծի և ժողկոմատի ապարատի աշխատանքները՝ անխնա դուրս վտարելով անշարժության և բյուրոկրատիզմի բոլոր ելեմենտները, վերից վար սահմանել ամուր դիսցիպլինա, վորն ապահովի յուրաքանչյուր կարգադրության կատարումը,

մանրագնին ստուգման յենթարկելով նրա իրական և վոչ թե թղթե կիրառումը։

5. Կենտկոմի պլենումը պարտավորեցնում է ԽՍՀՄ ԺՏԳՆ-ին անմիջապես ծավալել վագոն և չոգեմեքենա չինող գործարանների աշխատանքները մինչև նրանց կարողության լրիվ ոգտագործումը։ Առաջարկում է ՍՊՆ-ին վոչ ուշ, քան դեկտեմբերի 1-ը, վորոշել 1932 թ. վագոնաշինության և չոգեմեքենաշինության ծրագրերը։

Կենտկոմի պլենումն առաջարկում է ԽՍՀՄ ԺՏԳՆ-ին անմիջապես միջոցներ ձեռք առնել մասնագիտացնելու չոգեմեքենա չինող գործարանները և արիշ ձեռնարկություններ տեղափոխելու այն պատվերները, վորոնք կապ չունեն նոր չոգեմեքենաներ չինելու հետ։ ՀՃԺ կոմիսարիատին տալ չորրորդ կվարտալի համար ծրագրված քանակությամբ ռելսեր, նորոգման մասեր ու անհրաժեշտ նյութերը։ Անմիջապես միջոցներ ձեռք առնել ընդարձակելու ռելսերի արտադրությունը, կատարելու համար 1932 թ. մեծացրած ծրագիրը։ ՀՃԺ կոմիսարիատին տալ անհրաժեշտ ելեկտրոսարքավորումն ու նյութեղենը կարևորագույն ուղղությունների ու հանգույցների կապի գործը բարելավելու համար, տրանսպորտը լիովին ապահովել ջրամատակարարման սարքավորումով (կաթսաներ, շարժիչներ, խողովակներ), վերացնելու համար յերկաթուղային ցանցի՝ ջրով ամենից վատ մատակարարվող գծամասերի դժվարությունները։

6. Նկատի առնելով յերկաթուղային տրանսպորտը պահեստի մասերով ապահովելու բացառիկ կարևոր նշանակությունը, առաջարկել ՍՊՆ-ին և ՀՃԺ-կոմատին չտալ միջոցներ ձեռք առնել կատարելու պահեստի մասերի պատվերները և ՀՃԺ-կոմատի գործարաններն ու արդյունաբերությունը մետաղով լիովին ապահովել— պահեստի մասերը պատրաստելու համար։

7. Դեռևս անբավարար դտնելով տրանսպորտային կոոպերացիայի աշխատանքը յերկաթուղայիններին մատակարարելու պլանի կատարման գործում, Կենտկոմի պլենումն առաջարկում է Մատժողկոմատին ու Ցենտրոսայուզին լրիվ և իր ժամանակին ապահովել յերկաթուղայինների մատակարարումը՝ համաձայն կառավարության սահմանած պարենային և արդապրանքային ֆոնդերի չափի։ Առաջարկել ՀՃԺ-կոմատին և յերկաթուղայինների միությանը Կենտկոմին՝ ամրացնելով տրանսպորտային կոոպերացիայի աշխատանքը՝ վճռականորեն բարելավել այդ ֆոնդերի բաշխումը յերկաթուղայինների առանձին խմբերի միջև։

8. Կենտկոմի պլենումը միանգամայն անբավարար է գտնում նախագծված ժամկետում տրանսպորտը վերակառուցելու համար ՀՃԺ-կոմատի և արդյունաբերության նախապատրաստական տեմպը և առաջարկում է ԱՊԽ-ին, համաձայն Կենտկոմի և Ժողկոմխորհի վորոշումներին, վոչ ուշ, քան սույն թվի դեկտեմբերի 1-ը, վերանայել յերկաթուղային տրանսպորտի վերակառուցման աշխատանքների 1932 թ. ամբողջ պլանը, յելակետ ունենալով հետեվյալ միջոցառումները.— Ուրալի, Կուզբասի, Դոնբասի կարևորագույն ուղղությունների ելեկտրիֆիկացիայի աշխատանքների ծավալումը և 1932 թ. անհրաժեշտ քանակությամբ ելեկտրոզնացների կառուցումը, ջրամատակարարման տեսակետից դժվարություններ քաշող գծերի ապահովման համար ջերմադնացների շինարարության ծավալումը (հատկապես փոքրիկ ջերմադնացներ— գծային աշխատանքների մանյովրների համար), Լուգանսկի գործարանի վերակառուցման ուժեղացումը նոր, ավելի ուժեղ տիպի շոգեմեքենաներ կառուցելու համար, կարևորագույն ուղղությունների, հատկապես Դոնբասի և Ուրալի, գծերի ուժեղացումը, Մասկվայի, Լենինգրադի, Նիժնի-Նովգորոդի և նման հանգույցների վերակառուցումը, Վոլգայի, Ոկայի և Որի վրա նոր կամուրջների կառուցման ուժեղացումը, բեռնելու և դատարկելու մեքենայացումը, գծերի կապի արմատական բարելավումը, շարժական կազմի սարքավորումն ավտոմատիկ արգելակներով և փակ ուղղությամբ մարշրուտներում— ավտոմատիկ կցաններով, ՀՃԺ-կոմատի նորոգման գործարանների վերակառուցումը, գործարանների վորոշ խմբի առանձնացումը՝ լայն մասշտաբով պահեստի մասեր և գործիքներ պատրաստելու համար:

9. Ցելնելով յերկաթուղային տրանսպորտի նոր կադրերի և բարձր վորակավորված, ամուր ապարատի սուր պահանջից, Կենտկոմի պլենումն առաջարկում է ՀՃԺ-կոմատին, ուժեղացնել կադրերի պատրաստման աշխատանքը ՌՍԻՀ-երի, տեխնիկումների միջոցով, վերավորակավորելով դիսպետչերներին, շարժման աշխատակիցներին, մեքենավարներին, ելեկտրաքարշի աշխատակիցներին և ուրիշներին՝ չկտրելով նրանց գործնական աշխատանքից:

10. Ցերկաթուղային տրանսպորտի աշխատանքների արմատական բարելավման գործում պլենումը կուսակցության կարևորագույն խնդիրն է համարում՝ կոմունիստական կադրերով ամրացնել ամբողջ կառավարման ապարատը՝ ստորին ողակից մինչև բարձրագույն ողակը և հատկապես շարժման սպասարկող ապարատը, ակտիվ ու առաջ դնացող կոմունիստներին փոխադրել տնտեսական աշխատանքի, վորպես կայարանների, դիսպանցիաների, դեպոների պետեր ու պետի ոգնականներ, առանձին բաժանմունքների, շրջանների ու գծերի պետերի ոգնականներ և այլն: Կենտկոմը սխալ և կուսակցության շահերին հակասող է համարում այն կոմունիստների տրամադրությունները, վորոնք չեն ցանկանում կուսակցական և կամ ուրիշ աշխատանքից տրանսպորտային ստորին աշխատանքի փոխադրվել:

Տրանսպորտային կոմունիստի պատվո գործը պետք է լինի իսկապես տիրապետել տրանսպորտային տեխնիկային, կարճ ժամանակամիջոցում սովորել և կարողանալ դառնալ ինքնուրույն ղեկավար ապարատի և կամ թե գծի աշխատանքների այս կամ այն հյուղում:

Կենտկոմի պլենումը պարտավորեցնում է աղգային կոմկուսների կենտկոմներին, յերկրային կոմիտեներին, մարզկոմներին՝ ուժեղացնել իրենց ղեկավարությունը շրջանային յերկաթուղային կուսկազմակերպիչների վրա, վորոնց հատուկ նշանակությունը կապված է վոչ միայն տրանսպորտի կուսաշխատանքների ամրացման գործին, այլև կուսաշխատավորներին նախապատրաստելու և տրանսպորտի տնտեսական ապարատը փոխադրելու գործին:

Կենտկոմի պլենումը հավանություն տալով Քաղբյուրոյի վորոշմանը նշանակալից թվով տրանսպորտային կուսկազմակերպիչներ տնտեսական աշխատանքի տեղափոխելու մասին, հանձնարարում է կազմբյուրոյին կուսակցական աշխատակիցների նոր խումբ գործուղել շրջանները, վորպես գծային կուսկազմակերպիչների:

11. Նշելով տեղական կուսկազմակերպությունների ուշադրության ուժեղանալը դեպի տրանսպորտային հարցերը, Կենտկոմի պլենումը միաժամանակ հաստատում է, վոր հաճախ կուսակցության յերկրային ու մարզային կոմիտեների մասնակցությունը տրանսպորտային աշխատանքներին սահմանափակվում է միայն ձևական ղեկուցումներով, հաշվետվություններով և հետաղոտություններով, փոխանակ յերկաթուղու աշխատանքների իսկական ստուգման և ամենորյա կոնկրետ ղեկավարության, փոխանակ միջոցներ ձեռք առնելու բարելավելու դեպոների, կայարանների, շրջանների և այլ աշխատանքները:

Մարզային և յերկրային կոմիտեների կողմից տրանսպորտին սիստեմատիկ ոգնություն ապահովելու համար Կենտկոմի պլե-

նումը պարտավորեցնում է աղգային կոմկուսների կենտկոմներին, մարզկոմներին և յերկրային կոմիտեներին անմիջապես առանձնացնել հատուկ քարտուղար և աղատել նրան բոլոր մյուս պարտականություններից բացառապես տրանսպորտային աշխատանքները ղեկավարելու համար:

12. Կուսակցությունը վոչ մի դեպքում չի կարող թույլ տալ յերկաթուղու աշխատանքների անցյալ ձմեռվա ընդհատումների կրկնությունները: Կենտկոմը տեղական կուսկազմակերպություններին պատասխանատու յե համարելու այս կամ այն գծամասի տրանսպորտի աշխատանքների ճեղքվածքների համար: Ամբողջ կուսակցական և տեղական կուսկազմակերպությունների ուշադրությունը պետք է ե՛լ ավելի կենտրոնացվի յերկաթուղային մասների հետագա մոբիլիզացիայի շուրջը՝ բարելավելու շոգեմեքենաների և վագոնների աշխատանքը, բարձրացնելու ռեմոնտի վորակը, բարելավելու կայարանների աշխատանքը, ամրացնելու աշխատանքային դիսցիպլինան, վճռաբար լավացնելու ղեկավար ապպարատի աշխատանքները և պայքարելու անշարժության ու բյուրոկրատիզմի դեմ:

Տրանսպորտային միջոցների, վագոնների, շոգեմեքենաների հոդատար ոգտագործման համար և ամեն տեսակի պարապուրդների (բեռնելու, դատարկելու ժամանակ) դեմ մղվող պայքարը պետք է ապահովվի: Անհրաժեշտ և արդյունաբերական ձեռնարկություններին տրանսպորտի տված պատվերների կատարման ամենորյա ստուգումն ուժեղացնել և նրանց արտադրանքի վորակը բարձրացնել:

Կուսակցական և պրոֆմիութենական կազմակերպությունների հատուկ ուշադրությունը պետք է կենտրոնացնել տրանսպորտի ոտորին ողակների (ցեխի, դեպոյի, կայարանի, դիսատանցիայի և այլն) աշխատանքների լավացման վրա: Տրանսպորտի մոտակա լարված աշխատանքների ժամանակ այդ ողակներում պետք է կենտրոնացվեն կուսակցական և պրոֆեսիոնալ կազմակերպությունների ղեկավար կադրերը: Կուսակցության կողմից տրանսպորտի առաջ դրված մարտական հարցերի շուրջը մոբիլիզացիան վոչ միայն պետք է կանխի անցյալ տարվա տրանսպորտային դժվարությունները, այլ ընդհակառակն, ապահովի յերկաթուղային տրանսպորտի աշխատանքների լավացումը, ժողովրդատնտեսության պլանը անպայմանորեն կատարելու համար:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԾԱՎԱԼՄԱՆ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ

(ՀԱՄ Կ(բ)Կ ԿԿ-ի ՊԼԵՆՈՒՄԻ 1931 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԲԱՆԱՁԵՎՆ ԸՆԿ. ԸՆԿ. ՄԻԿՈՅԱՆԻ ՈՒ ՉԵԼԻՆՍԿՈՒ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ԸՆԿ. ԶԵՄԼՅԱԶԿԱՅԻ ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՄԱՆ ԱՌԹԻՎ)

Լսելով Մատժողկոմատի և Ցենտրոսայուղի հաշվետու զեկուցումները և ԽՍՀՄ-ի ԿՎՀ և ԲԳՏ հարակից զեկուցումը, Համկոմկուսի ԿԿ-ի պլենումն արձանագրում է, վոր Մատժողկոմատն ու Ցենտրոսայուղն զգալի աշխատանք են ծավալել խորհրդային առևտրի զարդացման և խանութների ցանցի ընդարձակման վերաբերյալ ԿԿ-ի և ԺԿՍ-ի մայիսյան դիմումը կյանքում կիրառելու գործում (Մատժողկոմատը բացել է 4155 խանութ, իսկ Ցենտրոսայուղը՝ 6758): ԿԿ-ի պլենումը գտնում է, սակայն, վոր խանութների, հատկապես մթերքի խանութների թիվը չի բավարարում արդյունաբերական շրջանների աճող պահանջները:

ԿԿ-ի պլենումը գտնում է, վոր թեթև արդյունաբերության անընդհատ աճումը և գյուղատնտեսական մթերքների մթերման աճող հնարավորություններն ապահովում են խորհրդային առևտրի ավելի ընդարձակ ծավալումը և խանութների նոր ցանցի ավելի ուժեղ ընդարձակումը, քան այդ մենք ունենք մինչև հիմա:

ԿԿ-ի պլենումն ընդգծում է, վոր խանութների մեծամասնության ներքին կարգ ու կանոնը և առևտրի վորակը դեռ գտնվում են անբավարար վիճակում և ապրանքաշրջանառության լճացումը դեռևս չի վերացված:

Խորհրդային առևտրի ծավալմանը խոչընդոտ հանդիսացող գլխավոր պատճառն այն է, վոր կոոպերատիվ-առևտրական ապարատի աշխատողների մի զգալի շերտը չի հասկացել և չի կարողացել ապրանքների մեխանիկական բաշխման ռելսերից անցնել խորհրդային առևտրի ծավալման ռելսերին: Մինչև հիմա առևտրական-կոոպերատիվ ապարատից վոչ միայն չի վտարված նեպմանական վոգին և չեն արտաքսված բյուրոկրատական ելեմենտները, այլև վերջին ժամանակներս ավելի ուժեղ կերպով է դրսևորվել նեպմանական վոգին, վորն արտահայտվել է սպառողի նկատմամբ իրական հոգատարության բացակայությամբ, գների քաղաքականության կոպիտ խախտմամբ, գների բարձրացմամբ,

բարձր շահերի հետևվից ընկնելով և վաճառականական առևտրով տարվելով։

Կուսակցության կողմից առևտրական-կոոպերատիվ ապարատը ուղարկված աշխատողների նոր կադրերը դեռ չեն տիրապետել առևտրական գործի տեխնիկային և չեն կարողանում կոնկրետ կերպով ղեկավարել կոոպերատիվ աշխատանքը, վորի հետևանքով առևտրա-կոոպերատիվ ապարատի աշխատանքը հաճախ ղեկավարում են բանվորական դասակարգին խորթ ելեմենտները, վորոնք դեռևս զգալի շերտ են կազմում այդ ապարատում։

Խորհրդային առևտրի հետագա ծավալման և բանվորական մատակարարման բարելավման շահերից յելնելով՝ ԿԿ-ի պլենումը վորոշում է.

1. Սպառկոոպերացիայի և Մատժողկոմատի որգանների մանրածախ առևտրական ցանցի հետագա ընդարձակման հետ միասին ծավալել ԺՏԳԽ թեթև արդյունաբերության միավորումների, Հողժողկոմատի խորհտնտեսային միավորումների, կոլտնտեսությունների և արդյունաբերական կոոպերացիայի արտադրության մթերքների մանրածախ առևտուր՝ գների խորհրդային քաղաքականության հիման վրա։

Պլանավորվող ապրանքների ֆոնդերը, վորոնք իրացվելու յեն ԺՏԳԽ թեթև արդյունաբերության և Հողժողկոմատի խորհտնտեսային միավորումների առևտրական որգանների միջոցով, պետք է սահմանվեն Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի կողմից։

ԺՏԳԽ և Հողժողկոմատի խանութների վերաբերյալ սահմանվելու յե առևտրի կանոնավորման նույնպիսի կարգ, վորպիսին սահմանված է պետական և կոոպերատիվ մյուս առևտրական կազմակերպությունների համար։

Խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների առևտուրը, վորը տեղի յե ունենալու գների խորհրդային քաղաքականության հիման վրա, ծավալվելու յե միայն պետությանը հանձնելիք (վաճառելիք) արտադրանքի պլանը ճշտապահորեն կատարելու դեպքում։ Կոլտնտեսությունների առևտրի վերաբերյալ սահմանվում է առևտրի կանոնավորման նույնպիսի կարգ, վորպիսին գոյություն ունի կոոպերատիվ առևտրի համար։

2. Յելնելով ապրանքների գների օիստեմատիկ իջեցման քաղաքականությունից, հավանություն տալ ԱՊԽ-ին կից գների կոմիտեի վորոշմանն ապրանքների առևտրական գները 30 տոկոսով իջեցնելու վերաբերյալ և ԱՊԽ կողմից հաստատվող պետական խնայբերի հատուկ ցանցում առևտրական գներով առևտրի սահմանափակման վերաբերյալ։

3. Առաջարկել Մատժողկոմատին՝ ծավալել սննդամթերքների մատակարարման բազաների ցանցն այնպիսի շրջաններում, ինչպիսիք են՝ Դոնբասը, Ուրալը, Կուզբասը և այլն, ինչպես նաև կազմել հիմնական պարենային մթերքների անհրաժեշտ պաշարներ արդյունաբերական կարևորագույն շրջանների համար։

4. Բանվոր դասակարգի, ինչպես նաև գյուղի աշխատավորական մասսաների ապրանքամատակարարումը բարելավելու և ապրանքամատակարարման հաստատված պլանները կատարելու պատասխանատվությունը բարձրացնելու համար Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդին առաջարկել.

ա) ապրանքային ֆոնդերը հաստատելու ժամանակ հատկացնել հատուկ ֆոնդեր՝ քաղաքային և գյուղական աղքատությունը մատակարարելու համար և խստիվ վորոշել վոչ-շուկայական սպառման ֆոնդերը (բանակ, պետբյուջետային հիմնարկներ, արտահադուստ և այլն).

բ) ԱՊԽ-ին կից ռեղերվային կոմիտեի տնորինության համար ստեղծել ապրանքների հատուկ պահեստի ֆոնդ։

5. ԿԿ-ի պլենումը բանվորական մատակարարման հետագա բարելավման գործում հատուկ նշանակություն է տալիս ճաշարաններին, գործարաններին ու կոոպկազմակերպություններին կից ամեն տեսակի ոժանդակ ձեռնարկություններ ծավալելուն՝ պաշտենավորման լրացուցիչ ռեսուրսների հայթայթման համար, ինչպես նաև ինքնամթերման ծավալմանը հատկապես աղքատության այն շրջանների համար, վորոնք մատակարարվում են յերկրորդ և յերրորդ ցուցակով, վորոնց մատակարարման հետագա բարելավումը հնարավոր է, դյուղատնտես, տեղական ռեսուրսների մոբիլիզացիայի հաշվին։

6. Նչելով ճաշարանների անբավարար քանակությունը, նրանց անհրաժեշտ ինվենտարով թույլ սարքավորումը և ճաշողներին հաջողությամբ սպասարկելու համար հարմարեցված չլինելը, ԿԿ-ի պլենումը միանգամայն անհրաժեշտ է համարում ուժեղացնել ճաշարանների շինարարությունը և բացել նոր ճաշարաններ՝ գոյություն ունեցողների ծանրաբեռնումը թեթևացնելու և նոր ցանցի հաշվին հանրային սննդի ցանցը հետագայում ընդլայնելու համար։

7. Արձանագրելով պետական արդյունաբերության և տնտես-

գործական կոոպերացիայի արտադրած մթերքների զգալի մասի անբավարար վորակը, ինչպես նաև այն միանգամայն անբավարար պայքարը, վոր մղվում է արդյունաբերական, առևտրական և կոոպերատիվ կազմակերպությունների կողմից արտադրանքի վորակը բարձրացնելու համար, առաջարկել Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդին մշակել և ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու շուկա հանվող ապրանքների վորակի արմատական բարելավումը:

ԿԿ-ի պլենումը պարտավորեցնում է կուսակցական, պրոֆմիութենական, խորհրդային և կոոպերատիվ կազմակերպություններին արտադրանքի վորակի բարելավման աշխատանքը համարել կարևվորագույն խնդիրներից մեկը, մասսայական սպառման ապրանքների վորակի համար մղվող պայքարի շուրջը ծավալելով բանվորական մասսայական կազմակերպությունների— պրոֆմիությունների, քաղխորհուրդների սեկցիաների և իրենց՝ կազմակերպված սպառողների սիստեմատիկ աշխատանքը:

8. Մատակարարման գործի հետագա բարելավումը դեմ է առնում սննդի արդյունաբերության և առևտրական ցանցի չափազանց թույլ տեխնիկական բաղային և հատկապես մեքենայացված հացթխության ծայրաստիճան անբավարար լինելուն:

ԿԿ-ի պլենումն առաջարկում է ԽՍՀՄ Ժողկոմխորհին՝ առանձնապես քննել խանութների, պահեստների, սառնարանների, հացագործարանների, փուռերի, աղորիքների շինարարության զարգացման ծրագիրը, նախատեսելով 1932 թ. ժողովրդական տնտեսության կոնտրոլ թվերում այդ ճյուղերի այնպիսի ծավալումը, վորն ապահովի բնակչության անարգել մատակարարումը և մասսայական սպառման արդյունաբերական ապրանքների և պարենային մթերքների անհրաժեշտ պաշարների ստեղծումը. իսկ հացագործարանների վերաբերյալ— բոլոր խոշոր քաղաքներում և արդյունաբերական կենտրոններում հաց թխելու մեխանիզացիան ավարտել վոչ ուշ քան 1933 թ. վերջը, իսկ Մասկվայում, Լենինգրադում, Դոնբասում և Ուրալում—վոչ ուշ քան 1932 թ. վերջը:

9. ԿԿ-ի պլենումը մատակարարման համար սահմանված ֆոնդերը բանվոր սպառողին հասցնելու խնդիրը համարում է վոչ միայն Մատժողկոմատի և սպառողական կոոպերացիայի, այլև տեղական կուսակցական և պրոֆմիութենական կազմակերպությունների պարտավորությունը, անթույլատրելի է համարում այդ ֆոնդերի վոչ ըստ անմիջական նպատակի ոգտագործումը, ապահովելով առաջին հերթին, սահմանված նորմաներով, բանվորների, ծառայողների, նրանց ընտանիքների և մատակարարման հատուկ և առաջին ցուցակի մատակարարումը:

10. ԿԿ-ի պլենումն ընդգծում է առևտրական գործի տեխնիկային տիրապետելու անհրաժեշտությունը կոմունիստ և անկուսակցական առևտրական աշխատավորների համար: Այս կապակցությամբ պլենումն առաջարկում է Մատժողկոմատին և Ցենտրոսոյուզին ծավալել առևտրական գործի մասնագետների և տեխնիկների, հատկապես ապրանքագետների պատրաստման տեխնիկական ԲՈՒՀ-երի և դասընթացների ցանց. կազմակերպել նաև յերեկոյան դասընթացներ վերապատրաստման համար, նպատակ ունենալով, առանց աշխատանքից կտրելու, բարձրացնել առևտրական ապարատի աշխատողների վորակը, ստեղծելով աշխատանքի նույնպիսի պայմաններ նաև առևտրական գործի մասնագետների և տեխնիկների համար, վորպիսիք սահմանված են ԿԿ-ի վորոշմամբ արդյունաբերության մասնագետների վերաբերյալ:

11. Խորհրդային առևտրի ծավալման կապակցությամբ և նրա կանոնավորումն ուժեղացնելու համար Կենտրոնական Կոմիտեյի պլենումն անհրաժեշտ է համարում կազմակերպել ԽՍՀՄ Մատժողկոմատի ուժեղ ստորին շրջանային և քաղաքային ապարատներ և առաջարկում է Ժողկոմխորհին ապահովել այդ խնդրի իրականացումը:

12. ԿԿ պլենումը պարտավորեցնում է աղգային կոմկուսակցությունների կենտկոմներին, յերկրային կոմիտեներին և մարզային կոմիտեներին, բանվորների և գյուղացիների մատակարարման գործին մարզային և յերկրային կուսակցական կազմակերպությունների կողմից ցույց տալիք աջակցությունն ապահովելու համար, աղգային կուսակցությունների կենտկոմների, յերկրային կոմիտեների և մարզկոմների քարտուղարներից մեկին անհապաղ առանձնացնել մատակարարման խնդիրների համար, ազատելով նրան մյուս բոլոր տեսակի պարտականություններից:

ԳԻՆԸ 5 ԿՈՊ. (1 մ.)

РЕЗОЛЮЦИИ ОКТЯБРСКОГО (1931) ПЛЕНУМА ЦК ВКП (б)

Госиздат ССР Армении
Эривань—1931